ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/38

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Ապարանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, չափագրական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.02.2021թ.-ի թիվ 26/26/1593-2021 գրությամբ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ապարանի քաղաքապետարանի 04.02.2021թ.-ի թիվ 020/141 գրության հիման վրա, 08.02.2021թ.-ին «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 08.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/38 համարի ծածկագիրը:

18.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. Ապարանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Ապարանի քաղաքապետարանը 04.02.2021թ.-ի թիվ 020/141 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) կարիքների համար 2020 թվականի դեկտեմբերի 30-ին չափագրական հետազոտությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ծանուցվել է համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկի մասին, սակայն վերջին օրենքով սահմանված ժամկետում Համայնքապետարանին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526- Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, Մասնակցի կողմից ներկայացված հայտը և Համայնքապետարանի կողմից «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին ուղղված ծանուցումների լուսապատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2021թ.-ի թիվ 26/26/1593-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 18.02.2021թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը 09.02.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ 30.12.2020 թվականին Ապարանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20 ծածկագրով չափագրական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի համար ներկայացրել եմ հայտ 2-րդ չափաբաժնի համար, սակայն ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին չափաբաժնի համար հաղթող ճանաչել «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես հայտ չեմ ներկայացրել 1-ին չափաբաժնի համար, ուստի չէի կարող հաղթող ճանաչվել տվյալ չափաբաժնի համար: Եթե հայտում առկա էր անհամապատասխանություն ապա հանձնաժողով պետք էր կասեցներ հանձնաժողովի նիստը, մինչև կասեցման ժամկետի ավարտը հնարավորություն տալով մասնակցին շտկել թերությունը, եթե այդպիսին կային, որը հանձնաժողովի կողմից չի իրականացվել խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և 41-րդ կետի դրույթները, այն է՝ 41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում

իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Հաշվի առնելով վեր նշված իրավական ակտը հանձնաժողովը հիմք է ընդունել իմ կողմից ներկայացված հայտը, որում առկա է միայն 2-րդ չափաբաժնի մասով: Բացի այդ 12.01.2021 թվականին կայացած գների նվազեցման բանակցությունների արդյունքում օրինակ եթե ես ներկայացրել էի 1-ին չափաբաժնի համար գնային առաջարկ 31 (երեսունմեկ) ՀՀ դրամ, ապա ինչպես կարող էր «ՓՈԹՈ» ՍՊԸ-ն 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամից նվազեցնել 97000 (իննսունյոթ հազար) ՀՀ դրամ, քանի որ պարզ չէր իմ կողմից պայմանագիր կնքվելու է թե ոչ:

Իմ կողմից հանձնաժողովին ուղղարկվել է երկու գրություն, որոնց վերաբերյալ պարզաբանում չեմ ստացել: Հանձնաժողովի կողմից չի պարզաբանվել թե ոնց եմ հաղթող ճանաչվել մի չափաբաժնի համար, որի չեմ մասնակցել: Կից ներկայացնում եմ այն բոլոր փաստաթղթերը որոնք հաստատում են իմ կողմից վկայակոչված փաստերը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Ապարանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից չափագրական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով 31.12.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն:

ii. «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ընթացակարգի 2 չափաբաժնին: Միաժամանակ Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով հայտ է ներկայացրել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, համապատասխանաբար ներկայացնելով 31 ՀՀ դրամ գումարի և 60038 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկ:

iv. Մասնակիցը նաև ներկայացրել է թիվ 2.1 հավելվածը, որում նշված են թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների մասով միավոր գների հանրագումարի հաշվարկները:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշել է գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

vi. Հանձնաժողովի 12.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

vii. 14.01.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

viii. Պատվիրատուն, 20.01.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ստորագրել պայմանագիրը և տուժանքի մասին համաձայնագրի հետ միասին 2 օրինակից ներկայացնել Ապարանի համայնքապետարան:

ix. Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված և կնքված պայմանագիրը, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2021թ.-ի թիվ 26/26/1593-2021 գրությամբ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի

ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ապարանի քաղաքապետարանի կողմից չափագրական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով 31.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, համապատասխանաբար ներկայացրել է 31 ՀՀ դրամ գումարի և 60038 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկ, ինչպես նաև ներկայացրել է թիվ 2.1 հավելվածը, որում նշված են թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների մասով միավոր գների հանրագումարի հաշվարկները:

Հանձնաժողովի 08.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, ինչի արդյունքուն 12.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված Պատվիրատուն, 20.01.2021թ.-ին Մասնակցին

ներկայացնելով «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ստորահրել պայմանագիրը և տուժանքի մասին համաձայնագրի հետ միասին 2 օրինակից ներկայացնել Ապարանի համայնքապետարան: Սակայն Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված և կնքված պայմանագիրը, ինչի արդյունքում վերջինս հայտը մերժվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ընթացակարգի 2 չափաբաժնին: Միաժամանակ Մասնակիցը հայտարարել և

հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 09.02.2021թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված գրությանն ու դրա կից նյութերին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ապարանի քաղաքապետարանի կողմից չափագրական հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով 31.12.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ընթացակարգի 2 չափաբաժնին, սակայն գնային առաջարկ է ներկայացրել թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների մասով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-146/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման նիստում չարձանագրելով Մասնակցի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածում անհամապատասխանությունը, այն է՝ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ի կողմից նշված է եղել, որ վերջինս հայտ է ներկայացնում միայն 2 չափաբաժնի համար, սակայն գնային առաջարկը ներկայացրել է թիվ 1 և 2 չափաբաժինների համար, խախտել է Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթների թույլ տված խախտման հանգամանքը չի կարող հանգեցնել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում նախաձեռնված ընթացակարգը մերժելուն, քանի որ եթե նույնիսկ Հանձնաժողովի կողմից տրվեր ժամկետ թիվ 1 հավելվածում առկա անհամապատասխանությունը շտկելու համար, միևնույն է այդ շտկումը չէր կարող հանգեցնել ներկայացված գնային առաջարկի փոփոխմանը, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթների թույլ տված խախտման հանգամանքը բավարար չէ նախաձեռնված ընթացակարգը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2021թ.-ի թիվ 26/26/1593-2021 գրությամբ «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/38 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կարեն Սարիբեկյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**